

լոց վիճակը, Պետրոսի գլխաւորութիւնը պէտք էր որ շոշափուէր: Սարգիս, որ հեռատես եւ շրջահայեաց էր, այս դաւէն չբռնուեցաւ, հապա իր բնաբանն ու վկայութիւնները Հայ Հայրապետներէն եւ հեղինակներէն առնելով ուղղափառ վարդապետութիւնը կը քարոզէր յուրախութիւն ուղղափառաց: Բայց թէպէտ հակառակողներ ալ գտնուէին՝ առ հասարակ ամէնքը կը զարմանային եւ կը յարգէին զինք եւ անոր քարոզին գունդագունդ կը վազէին:

Այս ամէնէն՝ Գաղոբայ սրտին մէջ աճեցաւ այն կասկածը, զոր Սահակ Ահագին սերմանած էր: Այս Սահակ լսելով Սարգսի համբաւոյն մեծնալը, 1755ին Պոլիս եկաւ, ինչպէս որ ի Զմիւռնիա սպառնացած էր Սարգսի, որ եթէ Պոլիս երթայ եւ այնտեղ քարոզէ, պիտի գայ եւ զինք պիտի հալածէ: Սահակ Գաղոբայ քով իջեւանեցաւ, եւ սկսաւ Սարգսի դէմ գործել՝ բայց ապարդիւն եղանակաւ. վասն զի Գաղոբ չէր ուզեր հրապարակաւ խռովութիւն յարուցանել: Սահակ այն ատեն սկսաւ Սարգսի քծնիլ:

Սարգիս այսպէս քանի մը տարի շարունակեց իւր քարոզութիւնները, շատերէն համակրութիւն եւ յարգանք գտաւ, եւ իւր կողմնակիցներն որ քան զոր այնչափ աճեցան, որ հակառակ կողման վրայ զօրացան: Գաղոբ ասոր առջեւն առնլու համար՝ խորհեցաւ վերջապէս աքսորել զՍարգիս, թէպէտ կը վախնար իշխաններէն: Ուստի Սարգիսը ստէպ կ'անուանէր թեմի